

ԳԷՈՐԳԻՍՈՍԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍՏԵԼԻ
ԿԱՄՕԲԷՆ ԱՄՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԵՍՅՐԱԳՈՅՆ ՊՍՏՐԻՍՐԲ ՀԱՄԱԶԳԱ-
ԿԱՆ ՆԱԽԱԾԵՍՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ԵՍՅՐ ԵԿԵԼԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱՇՆԻ

Գերապաշի Թեմակալ Առաջնորդաց, Բարձրապա-
շի Փոխանորդաց, Արժանապաշի Աագ Երիցանց եւ
Քանապից, Վսեմափայլ Իշխանաց եւ Մեծասանց, ա-
խասաւր Վանառականաց եւ Արհեստաւորաց, Քրտազան
Երկրագործաց, Բարեջան Հոգաբարձութեանց եւ Ուսուց-
չաց եւ Ամենայն Ազգային-Հասարակական Դործչաց,
Հարազատ Ողորդ Մայր Աթոռոյս Ողջոյն Քրիստոսաւանդ
եւ Օրհնութիւն Հայրապետական.

Արդէն իսկ գիտէք Դուք, զի արտաքին թշնամիք յար-
ձակեցան ի վերայ Հայրենեաց մերոց Մեծին Ռուսիոյ:

Հակառակ խողադասիրական ցանկութեանց եւ բարե-
միտ աշխատանաց Կառավարութեան մերոյ, ցաւալի է յոյժ,
զի ծագեցաւ պատերազմ սոսկալի ի մէջ քաղաքակիրթ
Եւրոպական ազգաց եւ պետութեանց:

Սակայն յայսմ պատմական վայրկենի, որ լի է փոր-
ձութեամբք եւ արհաւրօք, միխթարական է յոյժ, զի ժողո-
վուրդք Մեծին Ռուսիոյ, որպէս մի անձն եւ մի ընտանիք,
շողկապելոք ընդ միմեանս զօրեղ բարոյական գիտակցու-
թեամբ, ելին ի պաշտպանութիւն արգարութեան, իրաւանց
եւ քաղաքակիրթ ձգտմանց ազգաց ընդդէմ բռնութեան եւ
անարգարութեան:

Եւ յայսմ բարոյական միութեան տեսանի զբաւական
յազթութեան եւ երջանկութեան Հայրենեաց, բանգի զու-
գութիւն է մայր բարեաց եւ հերոսական զործոց:

Միխթարեմք յոյժ, զի հոգեւոր որդիք Մեր յամենայն
կողմանց առանձին ոգևորութեամբ եւ ազնուութեամբ կա-
տարեն զպետական եւ զքաղաքացիական պարտականութիւնս
իւրեանց, հողուով եւ սրտով մասնակից լինելով պաշտպա-
նութեան ընդհանուր հայրենեաց եւ փառաց նորա:

Յայսմ նուագի և ժողովուրդն Հայոց, որպէս յանցելում, ցուցանէ զպատմական և զվկայեալ յընթացս դարուց ի Գանդից Մեծագօր Կայսերաց Ռուսաց զհաւատարմական զգացմունս իւր, ամենայն պատրաստակամութեամբ և հաստատամտութեամբ:

Յուսարով և հաւատարով կատարելապէս, զի հոգևոր որդիք Մեր, ըստ օրինակի նախնեաց իւրեանց, կատարենցեն զպարտիս իւրեանց քաջութեամբ և ամենայն անձնագոհութեամբ, այսու Հայրապետական Կոնդակաւս յորդոր կարգամբ առ ամենեսեանդ՝ փութով օժանդակել նիւթապէս և բարոյապէս յաջողութեան համապետական մեծի և արդարացի գործոյն և կազմակերպել զմարդասէր գործեղբայրական օգնութեան վասն անօգնական ընտանեաց նոցա, որք ի պատերազմի պատրաստ են դնել զանձինս իւրեանց վասն պատուոյ և բարօրութեան ընդհանուր հայրենեաց մերոց՝ Մեծագօր Ռուսիոյ:

Յիշեցէք նոյնպէս, զի յընթացս սոսկալի պատերազմի, բազում վիրաւորք կարօտ լիցին խնամոց և բժշկութեան, որոյ վասն քրիստոնէական պարտիք կան ի վերայ ամենեցուն՝ ընդ փոյթ հասանել յօգնութիւն, որպէս ողորմած Սամարացին, առ ի սփոփել և ամօքել զվիշտս և զվէրս պարտաճանաչ զաւակաց Հայրենեաց:

Աղօթելով վասն յաջողութեան և յաղթութեան քաջամարտիկ զօրաց Ռուսիոյ, օրհնեմք զամենեսին և մագթեմք ի Տեառնէ պարգևել մեծագօր Պետութեան Ռուսիոյ փրկութիւն յամենայն վտանգից և յորոգայթից թշնամեաց, անսասանութիւն և յաջողութիւն կատարեալ, յուրախութիւն և յերջանկութիւն ամենայն հաւատարիմ հպատակ ազգաց Նորա. Ամէն:

Ի վերայ իսկականի ստորագ.

ԳԷՈՐԳ. Ե. Կ.Ս.ԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 5 օգոստոսի 1814 ամի

Ըստ տոմարիս ՌՅԿԳ

Ի Հայրապետութեան Մերում Գ. ամի

ՅԱՐԱՐԱՏԵԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. Էջմիածնի

Ի Վաղարշապատ

Թ. 1150